

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ (EBT) ՔԱՐՏ



Ձեր սննդադրոշմի և կանխիկ դրամի նպաստներն ստանալու հեշտ, ապահով և հարմարավետ ուղին:

Այս գրքույկը պահեք ապահով վայրույմ:

Հարցեր ունեք: Զանգահարեք
Հաճախորդների Սպասարկման
Ծառայություն

ԱՆՎՃԱՐ՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր

1-877-328-9677 կամ

այցելեք www.ebt.ca.gov կայքէջ

TTY: 1-800-735-2929 (Հեռահաղորդակցության
Փոխանցման Ծառայություն Լսողության/
Խոսքի Խանգարումներ Ունեցողների Համար)

Եթե այս գրքույկը կարդալուց հետո դուք ցանկանում եք ստանալ լրացուցիչ ուսուցում, խնդրում ենք, կապվել ձեր գործով զբաղվող մասնագետի հետ:

Բառեր, որ Հարկ է Իմանալ

POS (Վաճառակետային) Վերջնասարք

POS վերջնասարքը՝ կարդալով ձեր EBT Քարտը, թույլ կտա ձեզ սնունդ գնել ձեր սննդարոշմի նպաստներով: Դուք մի շարք խանութներում կարող եք սննդի կամ ոչ սննդի պարագաներ գնել ձեր կանխիկ դրամի նպաստներով, ինչպես նաև հետ ստանալ կանխիկ մանրադրամ կանխիկ դրամի նպաստների գնումներ կատարելու միջոցով: Մի շարք խանութներ կարող են նաև թույլ տալ ձեզ, որպեսզի առանց գնումներ կատարելու դուք կարողանաք կանխիկ դրամ ստանալ POS վերջնասարքից:



ATM (Դրամական Գործառնությունների Ինքնաշխատ Սարք)

ATM-ը դա սարք է, որը տեղադրված է լինում բանկերում, խանութներում և շատ այլ վայրերում, որը թույլ է տալիս ձեզ ստանալ ձեր կանխիկ դրամի նպաստները:



PIN (Անձնական Ինքնության Համար)

PIN-ը՝ չորս թվանշանոց գաղտնի ծածկագիր է, որը դուք օգտագործում եք ձեր EBT Քարտի հետ, որպեսզի վստահ լինեք, որ ձեզանից բացի ոչ ոք չի կարողանա ձեր քարտն օգտագործել: POS վերջնասարքերը չեն աշխատի մինչև չնուտքագրեք ձեր PIN-ը: Ահա թե ինչպիսի տեսք ունի ձեր PIN-ը POS վերջնասարքում:



Quest® ՆՇԱՆ

Quest® Նշանը՝ այն նշանն է, որը դուք կտեսնեք խանութների դռներին, մթերքների դուրս հանելու շարքերի և POS վերջնասարքերի վրա, որոնք հուշում են ձեզ, որ տվյալ խանութում կամ սարքում դուք կարող եք օգտագործել ձեր EBT Քարտը: Quest® նշանի վրա կան հատուկ պատկերներ, որոնք ձեզ կհուշեն ձեր օգտագործելի նպաստի տեսակը: Խանութում



Որտեղ Օգտագործել Ձեր EBT Քարտը



Կալիֆորնիայում և ողջ երկրով մեկ ցանկացած վայրում, որտեղ կտեսնեք Quest® Նշանը:

Ձեր EBT Քարտը Կարող էր Օգտագործել

POS վերջնասարքերում, որպեսզի՝

- Ձեր սննդադրոշմի նպաստներն օգտագործելով՝ սնունդ գնեք
- Ձեր կանխիկ դրամի նպաստներն օգտագործելով՝ գնեք սննդի կամ ոչ սննդի պարագաներ, ինպիսինք են՝ տակդիրները կամ հագուստը
- Ձեր կանխիկ դրամի հաշվից կանխիկ դրամ ստանաք որևէ գնում կատարելուց հետո (կախված խանութի կանոններից)
- Ձեր կանխիկ դրամի հաշվից կանխիկ դրամ ստանաք առանց որևէ գնում կատարելու (կախված խանութի կանոններից)



ATM-ներից կանխիկ դրամի նպաստներ ստանալու համար

Դուք POS վերջնասարքեր և/կամ ATM-ներ կարող եք գտնել՝

- Նպարեդենի խանութներում
- Dees
- Գիշերային և հերթապահ խանութներում
- Banks
- Բենզալցակայաններում

Ձեր PIN-ի Մասին

- Ձեր չորս գաղտնի թվանշանները կոչվում են Անձնական Ինքնության Համար կամ կարճ ասած՝ PIN:
- Ամեն անգամ ձեր քարտն օգտագործելիս, ձեզ հարկավոր է գործածել ձեր PIN-ը, այլապես ձեր քարտը ՉԻ աշխատի, և դուք ՉԵՔ կարողանա ձեր նպաստներն ստանալ:
- ՈՉ ՈՔ չգիտի ձեր PIN-ը: Ներառյալ ձեր գործով զբաղվող մասնագետը և Հաճախորդների Սպասարկման Ծառայության Վստահության Հեռախոսի ներկայացուցիչը:



Ինչպես Կարող էք Ձեր PIN-ը Ապահով Պահել

- ԵՐԲԵՔ չգրեք PIN-ը ձեր քարտի, քարտի պահպանակի կամ քարտի հետ պահվող որևէ այլ բանի վրա:
- Ձեր PIN-ը պահեք գաղտնի: ԵՐԲԵՔ չտաք ձեր PIN-ը ձեր գործով զբաղվող մասնագետին, ընտանիքի անդամներին, խանութների գանձապահներին կամ որևէ այլ անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ դուք ցանկանում եք, որ նրանք կարողանան ստանալ ձեր ԲՈՒՈՐ նպաստները:

- Երբեք մի օգտագործեք ձեր PIN-ը, եթե կարծում եք, որ ինչ-որ մեկը հետևում է ձեզ:
- Ձեր EBT Քարտն օգտագործելիս, դուք կարող եք մինչև չորս անգամ փորձել մուտքագրել ձեր PIN-ը: Եթե ձեր չորրորդ փորձն էլ ձախողվի, դուք չեք կարողանա ձեր քարտն օգտագործել մինչև կեսգիշերն անցնելը: Եթե չեք կարող ձեր PIN-ը հիշել, զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն (հեռախոսի համարը նշված է ձեր քարտի ետնամասում): Հաճախորդների Սպասարկման Ծառայությունը չգիտի ձեր PIN-ը, բայց կօգնի ձեզ փոխել ձեր PIN-ը:
- Եթե որևէ անձ իմանա ձեր PIN-ը առանց ձեր համաձայնության, անմիջապես զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայության հեռախոսահամարով կամ այցելեք հանրային օգնության գրասենյակ՝ PIN-ը փոխելու համար:
- Եթե որևէ անձ վերցրել է ձեր քարտը և գիտի ձեր PIN-ը, ապա նրանք կարող են օգտագործել ձեր նպաստները: Եթե նպաստները մեկ ուրիշի կողմից հանվել են մինչև ձեր կողմից Հաճախորդների Սպասարկման Ծառայություն զանգահարելը [ԶԵՐ ՆՊԱՍՏՆԵՐԸ ՉԵՆ ՓՈՒՆՉԱՏՈՒՑՎԻ](#): Անմիջապես զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն՝ ձեր քարտը չեղարկելու համար:

Իմացեք Ձեր Հաշվեկշիռը

Ձեր սննդադրոշմի և/կամ կանխիկ դրամի նպաստի հաշիվներում ծախսելիք գումարի Բնացորդն իմանալու լավագույն ձևը ձեր հաշվեկշիռն ծանոթ լինելն է: Իսկ ձեր հաշվեկշիռն իմանալու լավագույն ձևը **ԶԵՐ ՎԵՐՋԻՆ ՍՏՏԱԿԱՆԸ ՊԱՇՊԱՆԵԼՆ Է:**

STORE NAME		
100 ANY STREET ADDRESS		
CITY, STATE ZIP		
TERM ID 258407		
MERCH TERM ID 258407ABC		
SEQ# 289		
CLERK 107		
06/02/99 10:25		
CASE # C1234567890		
	TRAN AMT	END BAL
CASH	\$ 0.00	\$ 125.00
FS	\$ 45.20	\$ 229.80
FS PURCH	\$ 45.20	APPROVED
*** DO NOT DISPENSE CASH ***		

Եթե կորցրել եք ձեր վերջին ստացականը և ցանկանում եք իմանալ ձեր հաշվեկշիռը

- Զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն ձեր քարտի ետնամասում նշված համարով, կամ
- Ստուգեք ձեր սննդադրոշմի նպաստի հաշվի հաշվեկշիռը POS վերջնասարքի միջոցով
- Ստուգեք ձեր սննդադրոշմի և կանխիկ դրամի նպաստների հաշիվների հաշվեկշիռները EBT Հաճախորդների Կայքէջում www.ebt.ca.gov:
- Ստուգեք ձեր կանխիկ դրամի հաշվի հաշվեկշիռը ATM-ի կամ POS վերջնասարքի միջոցով: (Եթե ձեր հաշվեկշիռը ստուգեք ATM-ից, ձեզանից կզանձվի 25 ցենտ վճար):

ԶԵՐ ՔԱՐՏՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԴՈՒՔ ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ ԶԵՐ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ

Ինչպես Օգտագործել Ձեր EBT Քարտը Վաճառակետային (POS) Վերջնասարքում

Հնարավոր է, որ ձեր կատարելիք քայլերը լինեն տարբեր POS վերջնասարքերի յուրաքանչյուր տեսակի համար: Մի ամաչեք դիմել վաճառորդին օգնության համար:



POS Վերջնասարքից Սննդամթերք Գնելու Համար՝

Իմացե՛ք ձեր հաշվեկշիռը: Ստուգե՛ք ձեր վերջին ստացականը կամ զանգահարե՛ք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն գնումներ կատարելուց առաջ, կամ ստուգե՛ք ձեր հաշվեկշիռը www.ebt.ca.gov կայքէջում:

- Քայլ 1** Ընտրե՛ք ձեր նպարեղենը և գնացե՛ք վճարման գիծ: Կախված խանութից, հնարավոր է հարկավոր լինի, որպեսզի դուք առանձնացնե՛ք ձեր թույլատրելի սննդի պարագաները անթույլատրելի պարագաներից:
- Քայլ 2** Սահեցրե՛ք ձեր քարտը վաճառակետային (POS) վերջնասարքի միջով կամ ձեր EBT Քարտը հանձնե՛ք վաճառորդին:
- Քայլ 3** Մուտքագրե՛ք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Վերջնասարքը կցուցադրի **** ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:
- Քայլ 4** Սեղմե՛ք «ՄՈՒՏՔԱԳՐԵԼ» (ENTER) ստեղնը:
- Քայլ 5** Վաճառորդը կմուտքագրի սննդադրոշմի նպաստի գումարը: Եթե գումարը ճիշտ է, սեղմե՛ք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:
- Քայլ 6** Դուք կստանա՞ք տպագիր ստացականի պատճենը, որի վրա գրված կլինի՝
 - Խանութի անվանումը և հասցեն
 - Ձեր կատարած գնումի գումարը
 - Ձեր սննդադրոշմի նպաստի հաշվի նոր հաշվեկշիռը
- Քայլ 7** Պահպանե՛ք ձեր ստացականը, որպեսզի հաջորդ անգամ գնում կատարելիս իմանա՞ք ձեր հաշվեկշիռը:.

Հիշե՛ք, որ ձեզանից ձեր սննդադրոշմի նպաստների օգտագործման համար վարձավճար չպետք է գանձվի, և դուք չե՞ք կարող կանխիկ կամ վերադիր դրամ ստանալ ձեր սննդադրոշմի նպաստի հաշվեկշիռից:

Երբ դուք օգտագործում եք ձեր EBT Քարտը, Վարչաշրջանը չի իմանա ինչ եք դուք գնել: Կիմանա միայն, թե որտեղ եք գնումը կատարել և որքան եք ծախսել: (this sentence is missing in English source text though it is available in Armenian version therefore I included it in the retyped file)

POS Վերջնասարքից Ոչ Սննդի Պարագաներ Գնելու Համար

Իմացե՛ք ձեր հաշվեկշիռը: Ստուգե՛ք ձեր վերջին ստացականը կամ զանգահարե՛ք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն գնումներ կատարելուց առաջ, կամ ստուգե՛ք ձեր հաշվեկշիռը www.ebt.ca.gov կայքէջում:

- Քայլ 1** Ընտրե՛ք ձեր ոչ սննդի պարագաները և գնացե՛ք վճարման գիծ:
- Քայլ 2** Սահեցրե՛ք ձեր քարտը վաճառակետային (POS) վերջնասարքի միջով կամ ձեր EBT Քարտը հանձնե՛ք վաճառորդին:

Step 3 Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Վերջնասարքը կցուցադրի **** ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:

Step 4 Սեղմեք «Մուտքագրել» (ENTER) ստեղնը:

Step 5 Վաճառորդին տեղեկացրեք, եթե ցանկանում եք կանխիկ դրամ հետ ստանալ:

Step 6 Վաճառորդը կմուտքագրի ձեր հաշվից հանվելիք կանխիկ դրամի նպաստների գումարը (այն կարող է լինել ձեր գնումին համահավասար գումար կամ ավելի՝ եթե կանխիկ դրամ եք հետ խնդրել): Եթե գումարը ճիշտ է, սեղմեք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:

Step 7 Դուք կստանաք տպագիր ստացականի պատճենը, որի վրա գրված կլինի՝

- Խանութի անվանումը և հասցեն
- Կանխիկ դրամով ձեր կատարած գնումի և/կամ հանումի գումարը
- Ձեր կանխիկ դրամի նոր հաշվեկշիռը

Քայլ 8 Պահպանեք ձեր ստացականը, որպեսզի հաջորդ անգամ գնում կատարելիս իմանաք ձեր հաշվեկշիռը:

POS Վերջնասարքից Կանխիկ Դրամ Ստանալու Համար

Իմացե՛ք ձեր հաշվեկշիռը: Ստուգե՛ք ձեր վերջին ստացականը, գանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն գնումներ կատարելուց առաջ, կամ ստուգեք ձեր հաշվեկշիռը www.ebt.ca.gov կայքէջում:

Քայլ 1 Վաճառորդին հարցրեք, արդյո՞ք կարող եք տվյալ խանութում կանխիկ դրամ հանել և արդյո՞ք դրա համար վարձավճար է գանձվում:

Քայլ 2 Սահեցրեք ձեր քարտը վաճառակետային (POS) վերջնասարքի միջով կամ ձեր EBT Քարտը հանձնեք վաճառորդին:

Քայլ 3 Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Վերջնասարքը կցուցադրի **** ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:

Քայլ 4 Սեղմեք «ՄՈՒՏՔԱԳՐԵԼ» (ENTER) ստեղնը:

Քայլ 5 Վաճառորդին տեղեկացրեք, թե որքան կանխիկ դրամ եք ցանկանում ստանալ:

Քայլ 6 Վաճառորդը կմուտքագրի ձեր հաշվից հանվելիք կանխիկ դրամի նպաստների գումարը: Եթե գումարը ճիշտ է, սեղմեք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:

Քայլ 7 Դուք կստանաք տպագիր ստացականի պատճենը, որի վրա գրված կլինի՝

- Խանութի անվանումը և հասցեն
- Ձեր կանխիկ դրամի հանման գումարը
- Ձեր կանխիկ դրամի նոր հաշվեկշիռը

Քայլ 8 Պահպանեք ձեր ստացականը, որպեսզի հաջորդ անգամ գնում կատարելիս իմանաք ձեր հաշվեկշիռը:

Հիշեցե՛ք, որ կանխիկ դրամ չեք կարող ստանալ ձեր սննդադրոշմի նպաստի հաշվից:

Ի՞նչ Կպատահի, Եթե POS Վերջնասարքը Չաշխատի

OFFLINE FOOD STAMP BENEFIT VOUCHER		No. 3079351	
<p>Important! Vouchers must be entered or cleared on the POS device (or mailed within 10 days if non-electronic) within 15 days of the sale or funds will not be reimbursed.</p>		Trans. Date/Time _____	Approval Number _____
Card Number: _____		Store FNS Number _____	Purchase Amount _____ <input type="checkbox"/> Purchase <input type="checkbox"/> Refund
Print Cardholder Name _____		Merchant ID _____	
Cardholder Signature _____ Date _____		Print Store Name _____	
In signing this voucher, I believe that food stamp benefit funds are available for the full amount of this transaction.		Store Address _____	
		Store City/State/Zip Code _____	
		Store Supervisor/Clerk Signature _____	
		FNS regulations prohibit representation of this voucher by merchant if voice authorization was denied.	
		Date Entered ___ / ___ / ___	Operator's Initials _____
<p>This voucher will be rejected if information in this section has been altered.</p> <p>White – Client/Customer Copy; Yellow – Merchant Copy; Pink – Non-Electronic Retailer Mail-In Copy to Retail Support Operations NOTE: Electronic Retailers to Retain the Pink copy</p>			

Եթե դուք ցանկանում եք գնել թույլատրելի սննդի պարագաներ, և POS վերջնասարքը չի աշխատում, կամ խանութում չկա այդպիսի վերջնասարք վաճառորդը կլրացնի թղթե վաուչեր: Որոշ վաճառողներ, ինչպես շարժական վաճառողներն են POS վերջնասարքեր չունեն: Վաճառորդը կգրի ձեր EBT Քարտի համարը և ձեր ծախսած գումարը: Վաճառորդին ձեր PIN-ը ՄԻ տվեք: Վաճառորդը կգանգահարի՝ ստուգելու, արդյո՞ք դուք ունեք ձեր հաշվին բավարար նպաստներ սնունդը գնելու համար: Եթե ձեր հաշվին եղածը բավարար է, ձեզանից կխնդրվի ստորագրել վաուչերը, որի մի օրինակը կտրվի ձեզ: Շատ կարևոր է պահել այդ օրինակը, որպսզի ձեր վերջին EBT ստացականի վրա նշված հաշվեկշռից հանեք ձեր ծախսած գումարը: Այդպիսով դուք կստանաք ձեր հաշվին առկա ընթացիկ գումարը:

Դուք չեք կարող օգտագործել վաուչերը կանխիկ դրամի նպաստների հաշվից գումար ստանալու համար

Ինչպես Օգտագործել Ձեր EBT Քարտը ATM սարքում

Քայլ 1 Ձեր քարտը մտցրեք կամ սահեցրեք ATM սարքի միջով:

Քայլ 2 Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա և սեղմեք «OK» կամ «ՄՈՒՏՔԱԳՐԵԼ» (ENTER) ստեղնը:



Քայլ 3 Ընտրեք «ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ՀԱՆՈՒՄ» (WITHDRAW CASH) և այնուհետև «ՍՏՈՒԳՈՒՄ» (CHECKING): (Որոշ ATM սարքեր օգտագործում են տարբեր բառեր:)

Քայլ 4 Մուտքագրեք գումարը, որ ցանկանում եք հանել, դոլարային ամբողջական գումարով (օրինակ՝ \$20, \$200 կամ որևէ այլ գումար): Տասանոց և քսանանոց թղթադրամերը սովորաբար փոքրագույն տարադրամերն են:

Քայլ 5 Որոշ ATM սարքեր գանձում են հավելավճար: Եթե հավելավճար է գանձվում, ապա ATM-ի էկրանին կհայտնվի մի ծանուցում, որը կներկայացնի դրա չափը: Եթե ցանկանում եք ընդունել, սեղմեք «ՇԱՐՈՒՆԱԿԵԼ» (CONTINUE): Եթե չեք ցանկանում վճար կատարել, սեղմեք «ՉԵՂԱՐԿԵԼ» (CANCEL):

Քայլ 6 ATM-ը կտա ձեզ ձեր կանխիկ դրամը և ստացականը:

Քայլ 7 Պահպանեք ձեր ստացականը, որպեսզի իմանաք ձեր հաշվեկշիռը, երբ հաջորդ անգամ ձեզ կանխիկ դրամ հարկավորկ կլինի:

Հիշեցե՛ք, որ կանխիկ կամ վերադիր դրամ չեք կարող ստանալ

ձեր սննդադրոշմի նպաստի հաշվից:

ATM-ի Անվտանգության Խորհուրդներ

- Ձեր քարտը պատրաստ պահեք:
- Ընտրեք լավ լուսավորված ATM մի այնպիսի վայրում, որտեղ դուք ձեզ ապահով կզգաք (ինչպես խանութի ներսում):
- Կանգնեք այնպիսի դիրքով, որ ոչ ոք չկարողանա տեսնել ձեր օգտագործելիք PIN-ը:
- Հաշվեք ձեր դրամը, եթե ձեզ ապահով եք զգում:
- Արագորեն պահեք ձեր կանխիկ դրամը, քարտը և ստացականը:

Ինչպես Խնամել Ձեր EBT Քարտը

ՄԻ՝ պահեք ձեր քարտը և PIN-ը միասին:

ՄԻ՝ զսահեք կամ ճկնեք ձեր քարտը:

ՄԻ՝ գրեք կամ քերծեք ձեր քարտի ետնամասում գտնվող սև երիզը:

ՄԻ՝ դրեք ձեր քարտը մագնիսներից, հեռուստացույցերի, DVD, CD նվագարկիչներից, ձայնանվագարկչից կամ տեսաձայնագրիչից մոտիկ:

ՄԻ՝ դրեք ձեր քարտը արևի տակ, ինչպես՝ մեքենային ցուցիչների վահանակի վրա, որովհետև այն կարող է կծկվել և չաշխատել:

ՄԻ՝ թողնեք ձեր քարտը բաց վայրում. այն օգտագործելուց հետո միշտ պահեք ապահով տեղում:

ՄԻ՝ դեն նետեք ձեր քարտը. դուք կօգտագործեք նույն քարտը ամեն ամիս՝ քանի դեռ նպաստներ եք ստանում: Բացի այդ, դուք ձեր EBT քարտը կարող եք օգտագործել ամբողջ Կալիֆորնիայում և երկրով մեկ, որտեղ կտեսնեք Quest նշանը:

ՄԻ՝ դեն նետեք ձեր քարտը, եթե տեղափոխվում եք, քանի որ դուք դեռևս կարող եք նպաստներ ունենալ ձեր քարտի վրա:

Եթե դուք կորցրել եք ձեր քարտը կամ այն գողացվել է, անմիջապես զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն: Նրանք կարգելափակեն ձեր քարտը և կտեղեկացնեն ինչպես նոր քարտ ստանալ: Կարևոր է, որ դուք հնարավորինս շուտ զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն: Նոր քարտ ստանալը կարող է տևել երեք աշխատանքային օր:

Հավելավճարներ

Հավելավճարը՝ ծառայողական վճար է, որը որոշ խանութներ և բանկեր հնարավոր է գանձեն յուրաքանչյուր անգամ, երբ դուք ստանում եք կանխիկ դրամի նպաստներ ձեր EBT Քարտի միջոցով: Ձեր քարտն օգտագործելուց առաջ, որոնք ծանուցում ATM-ի էկրանին, որը կտեղեկացնի ձեզ այդ հավելավճարի մասին, կամ էլ որոնք հավելավճարի մասին տեղեկացնող նշանը խանութներում տեղադրված POS վերջնասարքի մոտակայքում: Եթե դուք չեք ցանկանում վճարել հավելավճարը, դուք կարող եք ընտրել ATM-ի գտնվելու մեկ այլ վայր: Որոնք վայրեր, որտեղ կարող եք միայն կանխիկ դրամ ստանալ առանց այդ հավելավճարի (this sentence is missing in English source version although is available in Armenian version therefore I included it in the retyped file): Հարցրեք ձեր տեղական հանրային օգնության գրասենյակից՝ տեղեկանալու, որտեղ դուք կարող եք կանխիկ դրամ ստանալ առանց հավելավճար վճարելու: ԴՈՒՔ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՔ ԱՅՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ՎՃԱՐԵԼ (this sentence is missing in English source version although is available in Armenian version therefore I included it in the retyped file):

Գործառնությունների վճարներ

Գործառնության վճարը՝ լրացուցիչ վճար է, որը կարող է ձեզանից գանձվել ATM-ից կանխիկ դրամի հանման դեպքում: Ձեզ թույլ է տրվում մեկ ամսվա ընթացքում չորս անգամ ATM-ից կամ POS-ից կանխիկ դրամի հանում իրականացնել առանց գործառնության վճարի: Չորս անգամ կանխիկ դրամի հանման գործարք իրականացնելուց հետո, ձեր հաշվից կգանձվի 80 ցենտ ATM-ից յուրաքանչյուր անգամ գումարի լրացուցիչ հանում իրականացնելու դեպքում: Գնումները և վերադիր կանխիկ դրամով գնումները չեն համարվում կանխիկ դրամի հանման գործարք: Ձեզինք երբեք չի գանձվի գործառնության վճար ձեր քարտը POS-ում օգտագործելու համար: ATM-ում ձեզանից կգանձվի 25 ցենտ, եթե դուք ստուգեք ձեր հաշվեկշիռը:

Ուղղակի ավանդ

Վարչաշրջանների մեծամասնությունում դուք կարող եք ընտրել, որ ձեր կանխիկ դրամի նպաստները ամեն ամիս ուղարկվեն անմիջապես ձեր ընթացիկ անձնական բանկային կամ կրեդիտային միության հաշվին՝ EBT-ի օգտագործման փոխարեն: Հարցրեք ձեր գործով զբաղվող մասնագետից՝ պարզելու, արդյո՞ք այն հասանելի է ձեր վարչաշրջանում, և ուղղակի ավանդի մասին ավելի շատ բան իմանալու համար:

Երբ Զանգահարել Հաճախորդների Սպասարկման Ծառայության Անվճար Հեռախոսահամարով 1-877-328-9677

Սա անվճար զանգ է:

Հաճախորդների Սպասարկման Ծառայությունը բաց է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր՝ պատասխանելու ձեր EBT Քարտին վերաբերող բոլոր հարցերին: Դուք կվիանաք Ավտոմատ Ինքնապատասխանիչ Սարքին և ձեր հարցերի մեծամասնությանը պատասխան կտրվի առանց Հաճախորդների Սպասարկման Ծառայության Ներկայացուցչի հետ զրուցելու անհրաժեշտության: Պատասխանները կարող են տրվել անգլերեն, իսպաներեն, արևելահայերեն, կամբոդերեն, չինարեն, պարսկերեն, հինդերեն, լատներեն, ռուսերեն և վյետնամերեն:

Զանգահարեք եթե՝

- Ձեր քարտը կորել կամ գողացվել է:
- Ձեր քարտը չի աշխատում:
- Դուք ցանկանում եք փոխել ձեր PIN-ը, քանի որ մոռացել եք այն, կամ եթե մեկ ուրիշն էլ գիտի ձեր PIN-ը: Ձեր հանրային օգնության գրասենյակը նույնպես կարող է օգնել ձեզ՝ փոխելու ձեր PIN-ը:
- Դուք ցանկանում եք իմանալ՝ որքան գումար է մնացել ձեր հաշիվներում:
- Ձեզանից գումար է գանձվել գնում կատարելու համար, բայց դուք չեք ստացել ապրանքները, կամ ձեզանից չափից շատ գումար է գանձվել գնվածի դիմաց:
- Դուք այլ հարցեր կամ խնդիրներ ունեք:

Օրը 24 ժամ / շաբաթը 7 օր
1-877-328-9677 կամ այցելեք
Հաճախորդների Կայքէջ www.ebt.ca.gov

TTY: 1-800-735-2929 (Հեռահաղորդակցության
Փոխանցման Ծառայություն Լսողության/Խոսքի
Խանգարումներ Ունեցողների Համար)

Երբ Կստանաք Ձեր Նպաստ

Ամսվա այն օրը, երբ դուք կստանաք ձեր սննդադրոշմի և/կամ կանխիկ դրամի նպաստները կախված է ձեր գործի համարի վերջին թվանշանից:

Սննդադրոշմի Նպաստներ

Եթե ձեր գործի համարի վերջին թվանշանն է՝	Ձեր սննդադրոշմի նպաստները հասանելի կլինեն՝
1	ամսի 1-ին
2	ամսի 2-ին
3	ամսի 3-ին
4	ամսի 4-ին
5	ամսի 5-ին
6	ամսի 6-ին
7	ամսի 7-ին
8	ամսի 8-ին
9	ամսի 9-ին
0	ամսի 10-ին

Կանխիկ Դրամի Նպաստներ

Եթե ձեր գործի համարի վերջին թվանշանն է՝	Ձեր կանխիկ դրամի նպաստները հասանելի կլինեն՝
1, 2, 3	ամսի 1-ին
4, 5, 6, 7	ամսի 2-ին
8, 9, 0	ամսի 3-ին

- Նպաստները հասանելի են շաբաթավերջերին և տոն օրերին:
- Ամսվա վերջում ձեր հաշվեկշիռը կավելացվի հաջորդ ամսվա հաշվեկշռին:

Մուտքագրեք այն օրը, երբ ձեր սննդադրոշմի նպաստները կնստեն ձեր հաշվին:

(Ամսվա 1-ից մինչև 10-րդ օրը)

Մուտքագրեք այն օրը, երբ ձեր կանխիկ դրամի նպաստները կնստեն ձեր հաշվին:

(Ամսվա 1-ին, 2-րդ կամ 3-րդ օրը)

Ինչ է անհրաժեշտ հիշել

Ձեր Քարտի/Ձեր PIN-ի մասին

- Եթե ձեր քարտը կորել կամ գողացվել է, անմիջապես զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն:
- Լավ հոգ տարեք ձեր քարտի մասին:
- Ձեր քարտը պահեք անվտանգ տեղում:
- Մի թույլ տվեք որևէ այլ անձնավորությանը օգտագործել ձեր քարտը առանց ձեր թույլտվության:
- Գործածեք ձեր PIN-ը քարտը յուրաքանչյուր անգամ օգտագործելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ օգտագործվում է թղթե վաուչերը:
- Մի մոռացեք ձեր քարտը ATM-ում կամ POS վերջնասարքերում:
- Տեղափոխվելիս զանգահարեք ձեր հանրային օգնության գրասենյակ: Դուք կկարողանաք օգտվել ձեր նպաստներից ձեր նոր վարչաշրջանում:

Ձեր Հաշվեկշիռների Մասին

- Պահպանեք ձեր ստացականները, որպեսզի իմանաք հաշվի հաշվեկշիռը:
- Ստուգեցեք ձեր հաշվի հաշվեկշիռը նախկան գնումներ կատարելը:
- Դուք կարող եք ATM-ից կամ POS-ից մեկ օրվա ընթացքում հանել ձեր ողջ կանխիկ դրամի հաշվի հաշվեկշիռը: Սակայն, կախված ATM-ի կամ POS-ի սահմանափակումներից, հնարավոր է, որ ձեզ անհրաժեշտ լինի կատարել ավելի քան մեկ գործառնություն:
- Դուք կարող եք ստուգել ձեր հաշվի հաշվեկշիռը՝ այցելելով www.ebt.ca.gov կայքէջ:

POS Վերջնասարքերի Մասին

- Օգտվեք POS վերջնասարքից ձեր սննդադրոշմի նպաստների հաշվի միջոցով սնունդ գնելու կամ կանխիկ դրամի նպաստներ ստանալու համար:
- Ջեզանից երբևիցե որևէ տեսակի վճար չի գանձվի ձեր սննդադրոշմի նպաստների օգտագործման համար:
- Խանութը հնարավոր է հավելավճար գանձի կանխիկ դրամ ստանալու դեպքում, եթե դուք գնում չկատարեք: Խանութից իմացեք իրենց քաղաքականության մասին:

ATM-ների Մասին

- ATM-ն օգտագործեք կանխիկ դրամի նպաստների հանման համար:
- Որոշ ATM-ներ հավելավճարներ են գանձում: Հարցրեք ձեր տեղական հանրային օգնության գրասենյակից՝ իմանալու, որտեղ դուք կարող եք օգտագործել ձեր քարտն առանց հավելավճարի:
- ATM-ից կամ POS-ից մեկ ամսվա ընթացքում չորս անգամ կանխիկ դրամ հանելուց հետո, ATM-ից յուրաքանչյուր լրացուցիչ հանումը կարժենա 80 ցենտ:

Համաձայն Դաշնային Օրենքի և ԱՄՆ-ի Գյուղատնտեսության Նախարարության քաղաքականության, այս հաստատությանն արգելված է խտրականությունը դրսևորել ցեղի, գույնի, ազգության, սեռի, տարիքի, կրոնի, քաղաքական համոզմունքների կամ անկարողության հիման վրա: Խտրականության դեմ բողոքագիր ներկայացնելու համար գրեք՝ ԱՄՆ-ի ԳՆ, Տնօրեն, Քաղաքացիական Իրավունքների Գրասենյակ, 1400 Independence Avenue, S.W., Washington, D.C. 20250-9410 կամ զանգահարեք (800) 795-3272 (ձայնային) կամ (202) 720-6382 (TTY): ԱՄՆ-ի ԳՆ-ը հանդիսանում է հավասար հնարավորություններ ապահովող և գործատու:



STATE OF CALIFORNIA
HEALTH AND HUMAN SERVICES AGENCY
DEPARTMENT OF SOCIAL SERVICES